ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 151 – Ա

04 մարտի 2019 թ.

«ԾՈՎԻՆԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներովև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի մարտի 5-ին, ժամը 10^{30}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Համբարձումյան Համբարձում (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ), Պողոսյան Անուշ (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Գալոյան Մամիկոն (մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ), Շահբազյան Հասմիկ (մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ), Ղուրշուդյան Մարատ (մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ), Խաչատրյան Արամ (մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Անուշ Պողոսյանին, քարտուղար՝ Հասմիկ Շահբազյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

04.03.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 17[illegible]

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ